**Ապիլակ 5 մգ**

Դեղաձև**.** ուղիղաղիքային մոմիկ:

Բաղադրություն. 1 մոմիկը պարունակում է մեղվակաթ 5 մգ:

Դեղաբանական խումբ. բնական ծագման կենսախթանիչ միջոց: Տոնուսացնող միջոցներ և ադապտոգեններ:

Կիրառման ցուցումներ

Ապիլակ բիոմոմիկները որպես պրոֆիլակտիկ միջոց կարելի է կիրառել կրծքային և վաղ տարիքի երեխաների մոտ, սնուցման խանգարման ժամանակ (հիպոտրոֆիա) և ախորժակի բացակայության դեպքում (անորեքսիա):

Հակացուցումներ

Ապիլակ բիոմոմիկների կիրառումը հակացուցված է մեղվաբուծության որևէ արտադրանքի հանդեպ ալերգիկ ռեակցիաների դեպքում, ինչպես նաև Ադիսոնի հիվանդության դեպքում:

Կողմնակի երևույթներ

Գերզգայունության ժամանակ կարող է նկատվել քնի խանգարում, որի ժամանակ պետք է կատարել դեղաչափի նվազեցում կամ հանել:

Կիրառման ձև և դեղաչափում

Անհասիկներին և նորածիններին պետք է նշանակել 2,5 մգ-ից, մեկ ամսականից մեծ երեխաներին 5մգ-ից օրը 3 անգամ: Մոմիկները կարելի է կիրառել 7-15 օր:

Պահպանման պայմաններ

Պահել մինչև 20°C ջերմաստիճանում: Պահել երեխաներից հեռու:

Պիտանիության ժամկետ

2 տարի: